

տեսակներ որոշել, այլ եւ նոյն տեսակ-  
ներէն վաճառելով արդիւնաբեր շահա-  
ստացութիւն ձեռք բերել: Չորանդա-  
դործութեան, իւր շինելու, արհես-  
տատներ կառուցանել նման եւրոպա-  
կանին եւն. եւնոյն

Այս ամենի ընդհանուր կառավա-  
րութեան հոգոյր եւ փոյթը յանձն ոյի-  
տի առնէ ինքն այս բարեգործութիւն-  
ների հիմնադիրն իւր կեանքի մնացոր-  
դը (նա տակաւին երկատարդալան  
առոյգ հասակի մէջ կգտնվի) նուիրե-  
լով իւր ծրագրած բարեգործութիւն-  
ներին հիմնաւոր եւ հաստատուն մի  
ուղղութիւն տալուն, եւ նորան ապա-  
գայի որ եւ իցէ պատահմունքէն դերծ  
մնալուն:

Այս մասին յիշեալ երկապարզ պա-  
րտնր մտադիր է շուտով խնդրամասոյց  
լինել նորին վեհ Օծութեան, յայտնե-  
լով հանգամանօրէն իւր խորհած եւ  
մտածած բոլոր նախագիծը:

ՅՈՂՀԱՆՆԷՍ Ք. ՔԱՋԱՋՆՈՒՆԻ.

Երաւաւ:

# ՍԵՆԵԿԱՅ.

Երիտցիր, տրդաներին յարմար է ահ,  
Իսկ զու քաջ ես, զնա տանջանքի, զընա  
վստահ,

Երիտցիր, թող ապաղան ցիցը քեզ տայ,  
Բայց փառք պատիւ մեռնելու չնն ցցի  
վերայ:

Երիտցիր, տանջանքի դէմ կողոյայ ըս-  
տուկ,—  
Ճակատազրի հակառակորդ ես զու կըտ-  
րուկ:

Երիտցիր, ճակատազիր է թշնամին  
վեհ անձներին, ահա ե քեզ մատնեց  
մահին:

Երիտցիր, մահի կղնաս, սիրելով մահ,  
Բայց սորանով զու փառաւոր կլինիս ան-  
մահ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆ ՆԵՐՒ ՀԵՏՔԵՐ ԻՒ  
ԻՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ԿԱՄԷՆԷՑ —  
ՊՕԴՕԼՍԿՈՒՄ.

Ներկայ տեղեկութիւններս կհաղոր-  
դեմ ըստ յիշողութեանս առանց գրա-  
ւոր աղբիւրներ ունենալու առ ձեռն,  
ուստի ներելու է ինձ այսպիսի դէպ-  
քում տեղեկութիւններիս բնական  
համառօտութիւնը եւ թերութիւնը:  
Աշխատելու եմ առաջին յարմար մի-  
ջոցում լրացնել տեղեկութիւններս  
կամ հասցնել խմբագրութեանդ ար-  
դէն մշակւած եւ հրատարակւած շա-  
րագրութիւններ այս նիւթիս վերա-  
բերմամբ:

Դեռ ժե. դարում քանի մի հազար Հայեր, փախչելով մահամետականների նեղութիւններից եւ սաստիկ կրօնական հալածանքներից, գնացած են Վեհաստան: բոլորովին յուսալով ի հարկէ խաղաղութիւն եւ պաշտպանութիւն գտնելու, իւրեանց թշուառութիւններից յեռոյ, քրիստոնէայ տէրութեան մէջ: Գաղթականների մի մասը հաստատուեցաւ Կամէնէց քաղաքում (այժմ ռուսական Պոդոլսկեան նահանգի գըլխաւոր քաղաք է, Գալիցիայի արեւելքում): Արքայական հրովարտականերով նոքա ստացան արտօնութիւններ մի կողմից ապահովելով նոցա ազգային սովորութիւնների, վարչութեան եւ կրօնի պահպանութիւնը, միւս կողմից տալով նոցա զանազան առեւտրական իրաւունքներ: Այս պատճառով հայկական հասարակութիւնն իւր դատաստան, իւր վարչութիւն (քաղաքային) եւ իւր եկեղեցիներ ունեցաւ: Թէ ինչ յարաբերութիւններ ունեցած են սկզբում Հայերը դէպի տեղացի Ռուսիները (Մալորոսներ) եւ դէպի տիրող Վեհերը — մենք չգիտենք: Մեզ յայտնի է միայն, որ Կամէնէցի Հայերն արդէն III դարում կաթօլիկ եղան եւ մի եւ նոյն ժամանակ լեհացան: Նոցա լեհանալը արդէն փոքր ինչ մեկլնած է տեղական հեղինակների ձեռով \*), որտեղից եւ հետեւեալը կքաղեմ. Վեհական կառավարութիւնն, ի հարկէ ճիշդիւնները —

պապութեան այս ջերմեռանդագոյն ծառաների եւ բոլոր ոչ — կաթօլիկների երգուեալ թշնամիների — յորդորմամբ, կաշխատէր ամեն միջոցներով ներգործել օտարազաւանների վերա, նոյնպէս եւ Հայերի վերա, նոցա հռոմայական եկեղեցու հետ միացնելու: Կամէնէցի Հայերին կառաջարկվէր ազնուականութիւն, կքաջալերէին Հայերի պատկաները կաթօլիկների հետ եւ այլն: Վերջին միջոցը շատ ձեռնառու էր բաղմաթիւ լեհացի պաներին (ազնուականներին), որոնք սնանկացել էին կամ աղքատացել: Կամէնէցի Հայերը առեւտրական ժողովուրդ էին, ուստի կարողութեան տէր եւ հարուստ էին: Ինչ տեսելու է, որ Հայի օրիորդի վերա պատկաճ Վեհացին միանգամայն կքալէր իւր գործերը, իսկ իւր կրօնի համար հալածված Հայն կգտնէր նորա մէջ պաշտպան: Այսպէս թէ այնպէս Վեհացիները մասամբ այս ճանապարհով, մասամբ հալածանքներով կհասնէին իւրեանց նպատակին, Կամէնէցի Հայերի սակաւամասնութիւնը միայն, փախչելով կաթօլիկների նեղութիւններից, պահպանեց հայրական աւանդութիւնները եւ հաւատը, անցնելով Թիւրքիա եւ Մօլդաւիա: Մնացածներն ամենքը դարձան կաթօլիկ եւ Վեհացի: Այժմ եւս տեղական աւանդութիւնը ցոյց կտայ երկու — երեք ընտանիք իւրեւ երբեմն Կամէնէցում ապրող Հայերի սերունդներ: Ես ինքս լաւ կճանաչեմ մի ընտանիք, որի մասին ժողովրդական ձայնը կասէ թէ նա հայկական ազգից կճագէ: Թուիս երես, սեաւ

(\*) Տես « Կաթօլիկութեան պատմութիւն Պօդոլիայի մէջ », Մ. Սիմաշկէվիչի. Կամէնէց — Պօդոլսկ. 1673 թ:

գանգուր մաղեր, երկար փոքր ինչ անկանոն քիթ, լայն եւ պերճ շրթունք արգարեւ կտրտայայտեն Վամէնէցի Հայերի արգէն սպառած ջնջված սեբունդների արեւելեան նախատիպը:

Սակայն որքան եւ կործանիչ լինէին ճիգովիաների եւ նոցա օգնական Աեհաւցիներին միջոցները, ժամանակը պահպանած է հեռաւոր Ասիայից թշուառ գաղթականների — Հայերի — անկասկածելի հետքեր, որոնք կյուսային կամէնէցում ազատ եւ հանգիստ ապրել: Այս նշանները մինչեւ այսօր իսկ կտահպանվին այս քաղաքում: Այսպէս մինչեւ այսօր եւս ժողովուրդը փողոցներից մինն կանուանէ Հայկական (այժմ՝ Նահանգապետի փողոց): Մօտերում, 30—40 տարի յառաջ, մի հրապարակ կար, որ կկոչվէր «Հայկական բազար» (այժմ՝ Նահանգապետեան հրապարակ): Բայց առաւել նշանաւոր են այս նկատմամբ էրէն — հայկական էլեղեղներ, որոնք շատ լաւ պահպանված են ցայսօր: Նոցանից մին այժմ կկոչվի Հայկական կօսցեօլ \*) եւ կաթօլիկներին կալատկանի, միւս փոքր եկեղեցին, Ս. Նիկողայոսի անունով, Ռուսներին կը պատկանի:

Հայկական կօսցեօլը, Աստուածածնի վերափոխման անունով, շատ լաւ պահպանված եկեղեցի է, ընտիր բիւզանդական ճարտարապետութեան ձեւով, որի սեղանը արեւելեան կողմն է, որ այժմ

եւս կտահպանվի, Հնայելով որ կաթօլիկական սովորութեամբ սեղանը պիտի միշտ դարձած լինի դէպի արեւմուտք: Արեւմտեան դաւիթում, առանց բաժանվելու եկեղեցուց, կառուցված է զանգակատուն: Եկեղեցու մուտքը սիրուն գաւթի մէջով է, աստիճաններով գեանից 2 1/2 արշին բարձրութեամբ: Այն բոլոր տեղը, ուր կգտնվի այս եկեղեցին, եւ եկեղեցական երկյարկեան տունը, շրջապատված է բարձր հին պարսպով, որ մտնամբ բերդի պարիսպ կշիշեցնէ: Եկեղեցու մէջ կայ երեք սեղան: Չախախտվեան սեղանի վերակգտնվի Աստուածածնի հրաշագործ պատկեր: Երկուսը զոտար զամալ լինողս:

Շարաթ օրերը սովորաբար կգայ ժողովուրդը բազմութեամբ այն պատկերը համբուրելու: Նորա տօնը օգոստոսի 15ին կլինի Նորա այժմեան աւագերէցը Պօգօյսեան Նահանգի կաթօլիկների դէկան կամ գործակալ կհամարվի: Նորա մօտ կան տեղապահ քահանայ եւ երկու զպիր:

Ս. Նիկողայոսի եկեղեցին կգտնվի 50 սաժնի հեռաւորութեամբ վերոյգրված կաթօլիկական կօսցեօլից: Սա շատ փոքրիկ է, բաւական անպաճոյճ, մինչեւ անգամ աղքատ է, նաւի ձեւ ունենալով, տանիքի վերա հաղիւ երեւեցող փոքրիկ գմբէթով: Սակայն սորա շինութիւնն անկասկածաւառա՞նց առաւել հին է: Շատ կարելի է, որ սա Հայերից կամէնէցում կառուցված առաջին եկեղեցիներից մին լինի: Իսկ յետոյ, երս հայկական գաղթականները ամրացան նոր բնակատեղում, հարստացան, նորա

(\*) Կաթօլիկ Լեհացիները իւրեանց եկեղեցիներ կօսցեօլ կկոչեն:

կառուցած են շքեղ եկեղեցի բիւղանդական ձեւով, որի մասին վերեւ ասվեցաւ: Ս. Նիկողայոսի եկեղեցին այնքան փոքր է, որ նորա տօնին (մայիսի 9ին) սպասաւորող տեղական արքեպիսկոպոսի աթոռը կղեւեղվի նոյն իսկ դրան մօտ իսկ աղօթողները կանգնած են սովորաբար եկեղեցական քաղաւմ: Բոյոր երկարութիւնը 3—4 սաժէն է: Պատերը չափազանց հաստ են եւ ամուր, այնպէս որ կարող են մնալ գեւեւ ամբողջ դարեր առանց ամենայն նսրագոյթեան: Ինչ կապամէր եկեղեցու աւագերէցը, որ երբ վերջերում հարկ եղաւ եկեղեցու մէջ շինած վառարանի համար պատը կտրել, չափազանց գոռաւորութեամբ կարողացած են պատը քանդել: Յաճախ երկաթեայ է նոր շինված: Ներքուստ մի սեղան կայ: Չախակողմեան պատի վերա կգտնվի Ս. Նիկողայոսի հրաշագործ պատկեր, որի առաջ ամեն հինգ շաբաթի օրեր օրհներգութիւն կկարդան: Նոյն պատի վերա, մի եւ կէս արշին քարձրութեամբ յատակից կգտնվի կոխածոյ պատկեր «Հայկա՛ն հայրապետի մը» — ոյսպէս մեկնեց ինչ եկեղեցու աւագերէցը: Արքան կյիշեմ, այս պատկերը թերված դրութեամբ է դէպի ձախ կողմը, քահանայապետական զգեստով եւ գաւաղանով:

Պատկերը գուրս եկած է պատի մակերեսից մօտ մի քառորդ եւ դէպի գաւաղագրեթէ կից է ս. Նիկողայոսի պատկերին: Այլ արդեօք այնտեղ որեւիցէ արձանագրութիւն — ես լաւ չեմ յիշում: Եկեղեցին ներքուստ ներկված

է դեղին գոյնով, նոյնպէս ի հարկէ եւ վերոյիշված պատկերը: Արան վերա կայ վերնատուն, օրտեղ կղեւեղվին երգեցողներն ժամասացութեան միջոցին: Յառաջագոյն վերնատունը քարձրանալին արտաքուստ լուսամտով, որի յաւաջ կգծէին սանգաւղիք եւ միայն մօտերումս ներկայ աւագերէց: Չեւսեւ Ռօբոնովիչը մուտքը եկեղեցու մէջից շինեց — եկեղեցու մէջ մի դաս միայն կայ: Եկեղեցու գաւիթը շտտ մեծ է եկեղեցու համեմատութեամբ: Մինչեւ վերջին ժամանակ այնտեղ ախուժ էին բնակված երեւմանական քարեր արձանագրութիւններով: Այժմ նոյն քարերից շինված է քառաչափ պարսպի դռներէն մինչեւ եկեղեցու դուռը: Յաւաթի է, որ աւելորդ լուսամտնք հնութեան այս վկաներն շատ վայելուց կերպով չեն գործածված: Բայի նորանից որ նորա ամեն օր անցորդների սփռտակ կմաշվին, նոցա վերա եղած արձանագրութիւնները անդադար կջնջվին: Ուստի հայկական հասարակութեան կեանքի վերջին մնացորդները կամէնէցի մէջ յաւիտեան կոչնչանան: Նոյնպիսի քարեր տեսած եմ հայկական Աօսցեօյի (վերափոխման եկեղեցու) աստիճաններէ վերա: Եկեղեցու քաղաւմ նոր շինվեցաւ երեք սենեակից վայելուց բնակարան քահանայի համար նախկին խրճիթի փոխանակ, որտեղ կընակէր սարկաւազը: Եկեղեցու սպասաւորներն են. քահանայ, սարկաւազ դպիր եւ ժամկոչ:

Ահա սոքա են իրական յիշատակարաններ, որ ես կարողացայ իմանալ եր-

կու եւ կէս տարի Կամէնէցի մէջ՝ բնա-  
կեյով։ Շատ կարելի է, որ կգտնվին ու-  
րիշներն եւս, օրինակ, զանազան աներ  
եւ այնքաւ թայց եւս չեմ զառաջած։  
Շատ ցանկալի կլինէր, որ իմ այս հա-  
մառօտ նկատողութիւնը որ եւ իցէ  
հետաքրքրութիւն շարժէր, եւ երեւան  
հանվէր Կամէնէց քաղաքում գտնված  
հայկական հնութիւնների առաւել  
ճիշտ եւ առաւել ընդարձակ հետա-  
դասութիւնը։ Եւ կարօղ եմ միայն  
խոստանալ, որ տեղական հնասէրները  
խնայելու չեն իւրեանց գործակցու-  
թիւնն աշտպիսի նուիրական ձեռնար-  
կութեան համար։

Բայց եւ այնպէս վերոյիշված յիշա-  
տակարաններով չեն վերջանում Կա-  
մէնէցի հայազն հասարակութեան  
կեանքի եւ գոյութեան բոլոր նշաննե-  
րը։ Նա գրաւոր փաստերն եւս, թողած  
է այն է քանի մի արձանագրական մա-  
տեաններ, որոնք կոչւ հիւն Կիւլի մէջ  
Կիւլիեան, Պօղոսիկեան եւ Վօլինսկեան  
նահանգների կենտրոնական կոչված  
դիւանում։ Այս դիւանը գեղեցիկ է  
Կիւլի համայնարանի շինութեան մէջ։  
Այս մատեանները եւս տեսած եմ Շ  
տարի յառաջ, երբ գեա եւս անձանօթ  
էի հայկական այբուբենին, բայց ինձ  
ասացին այնտեղ նոցա մասին թէ «հայ-  
կական արձանագրական մատեաններ  
են»։ Այժմ եւս մտաբերելով տառերի  
ձեւակերպութիւնը կարօղ եմ վկայել,  
որ նորա հայկական արձանագրերէին  
Թէ որքան են — չեմ կարօղ ճիշտ ա-  
սել։ Բայց թէ մինչեւ այժմ նոցա ոչ  
որ չէ քննած եւ հետազօտած, այս եւս

կհաստատեմ, այն լինջ փրքան հետա-  
քրքիր տեղեկու թիւներ կարելի կլինէր  
այնտեղից քաղել։ Շատ կարելի է, որ  
այս արձանագրերի երեաների մէջ թաղ-  
ված են շատ ծանր դէպքեր, գոյեւ եւ  
միութարական երեւոյթներ Կամէնէցի  
Հայերի կեանքից, որոնք կյոսացին  
այժմեան փոքր Ռուսիայի մէջ երկրորդ  
եւ տղահոյ հայրենիք գտնել։ Թող յու-  
սանք, որ վերջապէս այս տեղեւայայտ  
կամ աւելի լաւ է ասեմ, բոլորովին  
անյայտ հնութեան պահարանները պի-  
տի թափանցէ մի օր լոյսի մի ճառա-  
գոյթ եւ որ եւ իցէ բարեխիղճ եւ գիտ-  
նականը բանաստեղծի խօսքի համե-  
մատ։

Դարեւ որ փոշին հրովարտակներից  
մաքրելով արգար կրօյներ պիտի հա-  
ղորդէ աշխարհին, եւ կաւելացնեմ իմ  
կողմից պիտի յարուցանէ մաղուց մե-  
ռած անձներ, նկարագրելով նոցա  
կեանքը եւ գործունէութիւնը։ Եւ որ-  
քան հետաքրքիր տեղեկութիւններ  
կրօվանդակլին միշտ այն յիշատակա-  
րանների մէջ, որոնց դեռ եւս չեմ օ-  
տեցել հետազօտողի քննական ձեռք։

Տ. Բէլէնկի. (Գիմնազիոնի ուսուցիչ):

Իւշ-